ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

SECRETARY GENERAL

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ

0010, ք.Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
պաշտոնական էլ.փոստ 10010608@e-citizen.am
էլ.փոստ /E-mail/ эл.почта: min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 11) 818 520
🖷 (374 11) 818 506

№ 5/04.2/51753
«07» «09» 2018 թ.

«Սեմուր ընդ Կո» ՍՊԸ-ի տնօրեն Գուրգեն Վիրաբյանին
Հասցե՝ էլ.փոստ semur.69@mail.ru
հեռ. 094551211

Հարգելի պարոն Վիրաբյան

Ի պատասխան Ձեր 2018 թվականի հուլիսի 11-ի դիմումի հայտնում եմ, որ «Արմօյլ» ՓԲ ընկերությունը 14.06.2018թ. բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության էր ներկայացրել Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքի Երևանյան խճուղի թիվ 129 հասցեում յուղի և բիտումի արտադրամասերի տեխնիկական փաստաթղթերը, որը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /այսուհետ Օրենք/ 16-րդ հոդվածի 4-րդ մասին չհամապատասխանելու հիմնավորմամբ վերադարձվել էր լրակազմման: Այնուհետև 18.07.2018թ. փորձաքննության է ներկայացրել Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքի Երևանյան խճուղի թիվ 129 հասցեում յուղի և բիտումի նախնական գնահատման հայտն, ինչը կրկին, նույն հիմնավորմամբ վերադարձվել է լրակազմման: Նախնական գնահատման հայտի լրակազմված տարբերակը ձեռնարկողի կողմից փորձաքննության ներկայացվելու դեպքում, կիրականացվի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության գործընթաց, որում հաշվի կառնվեն Ձեր կողմից բարձրացված հարցադրումները: Փորձաքննական գործընթացի իրականացման դեպքում, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով կիրականացվեն հանրային քննարկումներ, որին կարող եք մասնակցել և ներկայացնել ձեր դիտողություններն ու առաջարկությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Ծանուցման և քննարկումների մասին կարող եք տեղեկանալ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի և բնապահպանության նախարարության պաշտոնական կայքերից:

Հարգանքով

Հ.Հովհաննիսյան

ԻՎ իրավական ապահովման բաժին
Ե. Մուրադյան Հեռ.01818540